



ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

10.03.2014թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԳԲԽ-04/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-04/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Յուլքոմ» ՍՊԸ-ի և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից 17.02.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-04/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Յուլքոմ» ՍՊԸ-ի և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 17.02.2014թ. ներկայացված բողոքով «Յուլքոմ» ՍՊԸ-ն և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն հայտնել են, որ ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից ինտերնետ և կորպորատիվ ցանցի կապերի ապահովման ծառայություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգ:

«Յուլքոմ» ՍՊԸ-ն և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն համատեղ գործունեության կարգով մասնակցել են նշված գնման ընթացակարգին:

Միաժամանակ նշված գնման ընթացակարգին համատեղ գործունեության կարգով մասնակցել են «ԱՐՄԵՆԻԱ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ն և «ԱրմենՏել» ՓԲԸ-ն, որոնք գնահատող հանձնաժողովի որոշումների համաձայն համատեղ գործունեության կարգով

ճանաչվել են որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակից, այնուհետև ընթացակարգի հաղթող:

Բողոքաբեր ընկերություններն ունեցել են տեղեկատվություն, որ «ԱՐՄԵՆԻԱ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ն նշված ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով հայտը ներկայացնելու դրությամբ ունեցել է ՀՀ հարկային վճարների գծով ժամկետանց պարտքեր և գնահատող հանձնաժողովին առաջարկել հրավերի առաջին մասի 8.5 կետի հիման վրա ստուգել հիշյալ կազմակերպության ներկայացրած տվյալի իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների եզրակացությունը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը 29.01.2014թ. ծանուցել է, որ հանձնաժողովի նույն օրվա արտահերթ նիստի որոշմամբ դադարեցվել է «ԱՐՄԵՆԻԱ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի մասնակցությունը գնման ընթացակարգին, իսկ «Յուքոմ» ՍՊԸ-ն իր գնային առաջարկը նվազեցնելու նպատակով հրավիրվել է բանակցությունների: Կազմակերպված բանակցությունների արդյունքում Ընկերությունը գնային առաջարկը նվազեցրել է 7 տոկոսով:

Այնուհետև գնահատող հանձնաժողովը 06.02.2014թ. նիստի արձանագրությամբ, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանումը, վերացրել է հանձնաժողովի 29.01.2014թ. արտահերթ նիստի՝ «ԱՐՄԵՆԻԱ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի գնման ընթացակարգին մասնակցությունը դադարեցնելու մասին որոշումը և հայտի գնահատման արդյունքում նշված մասնակից կազմակերպություններին համատեղ գործունեության կարգով ճանաչել է որպես ընտրված մասնակից:

Բողոքաբեր ընկերությունը գտնում է, որ հանձնաժողովի նշված որոշումը չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրությանը և Հրավերի պահանջներին հետևյալ փաստական և իրավական հիմնավորումներով.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝

- մասնակիցը պատվիրատուի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների գործընթացին մասնակցող անձն է,
- հայտը հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է,
- հրավերը պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմաններն են:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

«ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 2.1 կետի համաձայն՝ եթե մասնակիցը հայտով ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին: Բացի հայտարարությունից օրենքի նշված նորմով նախատեսված պահանջներին հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

- 2.2 կետի 2-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Գնահատող հանձնաժողովից ստացված փաստաթղթերի վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը ևս ընդունելի է համարել, որ ժամկետանց հարկային պարտավորությունները մասնակիցը պետք է մարեր (օրինակ՝ բանկային փոխանցում կատարեր) մինչև հայտը (հարկային պարտավորություններ չունենալու հայտարարություն տալը) ներկայացնելը: Սակայն բողոքաբեր ընկերության ունեցած տեղեկատվությամբ «ԱՐՄԵՆԻԱ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի կողմից ժամկետանց հարկային պարտավորությունների դիմաց վճարումները կատարվել են հայտերի բացմանը հաջորդող օրը:

Ինչ վերաբերում է մասնակցության իրավունքի հայտարարության գնահատմանը, ապա բողոքաբեր ընկերությունը գտնում է, որ նշված նորմերի հիման վրա անձը գնումների մասին ՀՀ օրենսդրության տեսակետից մասնակից է համարվում հրավերի հիման վրա հայտը ներկայացնելու պահից և հրավերով մասնակցի մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին ներկայացվող պահանջներին վերջինս պետք է բավարարի հայտը ներկայացնելու պահին:

Վերոգրյալի հիման վրա «Յուբոմ» ՍՊԸ-ն և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն գտնում են, որ մասնակցի ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու հանգամանքը պետք է գնահատվի հայտերի բացման օրվա դրությամբ, քանզի հակառակ պարագայում

մասնակիցը կարող է ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության պայմաններում մասնակցել գնման ընթացակարգին և հայտերը բացելու, մրցակիցների գնային առաջարկները արձանագրելու և առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու հիմքերի առկայության դեպքում կատարել հարկային ժամկետանց պարտավորությունները, ինչը և իրականացվել է տվյալ դեպքում:

Բացի այդ, գնահատող հանձնաժողովի կողմից կայացված նմանատիպ որոշումը կարող է դառնալ նախադեպային, այսինքն մասնակիցը ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալով, վերոհիշյալ մեխանիզմով կմասնակցի գնման գործընթացներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Յուքոմ» ՍՊԸ-ն և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն խնդրել են դադարեցնել գնահատող հանձնաժողովի 06.02.2014թ. կայացրած որոշումը և «ԱՐՄԵՆԻԱ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար:

2. ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 19.02.2014թ. N 03/032-306 գրությամբ դիմել է ՀՀ կառավարության աշխատակազմին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 17.02.2014թ. «Յուքոմ» ՍՊԸ-ի և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ կառավարության աշխատակազմը 04.03.2014թ. N 02/27.27/2934-14 գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից 2013թ. նոյեմբերի 19-ին հայտարարվել է (էլեկտրոնային ձևով) «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգ՝ կապի ծառայությունների (ՀՀ կառավարության աշխատակազմի կարիքների համար ինտերնետ և կորպորատիվ ցանցի կապերի ապահովման ծառայությունների) ձեռքբերման համար:

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 2014թ. հունվարի 14-ին: Հայտեր ներկայացրել են երկու մասնակիցներ՝ «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ն և «ԱրմենՏել» ՓԲԸ-ն համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) և «Յուքոմ» ՍՊԸ-ն և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Ըստ

ներկայացված գնային առաջարկների առաջին տեղն զբաղեցրել է «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» և «ԱրմենՏել» ՓԲ ընկերությունների կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2014թ. կայացած արտահերթ նիստի որոշմամբ դադարեցվել է ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի և «ԱրմենՏել» ՓԲԸ-ի համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցությունը ընթացակարգին: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշման համար հիմք է հանդիսացել «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի կողմից գրությամբ ներկայացված տեղեկության իսկության ստուգման արդյունքները:

Հաշվի առնելով, որ ընթացակարգի երկրորդ տեղը զբաղեցրած «Յուքոմ» ՍՊԸ-ի և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կոնսորցիումի կողմից հայտով ներկայացված գինը բարձր է եղել նախահաշվային գնից, գնահատող հանձնաժողովը գրավոր առաջարկ է ներկայացրել մասնակցին՝ գնի առաջարկի նվազեցման շուրջ բանակցություններ վարելու համար: Փետրվարի 1-ին՝ բանակցությունների արդյունքում «Յուքոմ» ՍՊԸ-ի և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից արված վերջնական գնային առաջարկը (հայտով առաջարկված գնից 7% ցածր) նույնպես գերազանցել է նախատեսված նախահաշվային գինը:

Նույն օրը՝ փետրվարի 1-ին ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության պատասխան գրությունը, որով գնումների լիազորված մարմինը կարևորել է «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի բարեխիղճ վերաբերմունքը և տեղեկատվության ամբողջական բացահայտումն իր իսկ կողմից, Ընկերության գործելակերպը չի բնութագրել որպես տեղեկատվության միտումնավոր աղավաղում (թաքցնում): Միաժամանակ գնումների լիազորված մարմինը հնարավոր է համարել շարունակելու գնման ընթացակարգի արդյունքների ամփոփումը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական պարզաբանումը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը փետրվարի 1-ի արտահերթ նիստում որոշում է ընդունել վերացնել իր՝ 2014թ. հունվարի 29-ի արտահերթ նիստի որոշումը՝ «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ին գնման ընթացակարգին մասնակցությունը դադարեցնելու մասին և շարունակել վերջինիս կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման գործընթացը:

3. ԳԲԽ-04/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Յուքոմ» ՍՊԸ-ի և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կոնսորցիումի կողմից 17.02.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

4. ԳԲԽ-04/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-04/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Յուքոմ» ՍՊԸ-ի և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Բողոքաբեր ընկերություններ) 17.02.2014թ. ներկայացրած բողոքը, «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ Հրավեր), գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) 29.01.2014թ. ժամը 16:30-ին, 01.02.2014թ. ժամը 17:30-ին և 06.02.2014թ. ժամը 17:00-ին կայացած նիստերի արձանագրությունները, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ՀՀ կառավարությանը 01.02.2014թ. ներկայացված N 034/2438-14 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 24.01.2014թ. N ՀՀ-044/1790-14 գրությունը, ՀՀ կառավարության 04.03.2014թ. Կենտրոնին ներկայացրած N 02/27.27/2934-14 գրությունը և գրությանը կից փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից ինտերնետ և կորպորատիվ ցանցի կապերի ապահովման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով էլեկտրոնային բաց ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) հայտ են ներկայացրել «Յուքոմ» ՍՊԸ-ն և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն, ինչպես նաև «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» և «ԱրմենՏել» ՓԲԸ-ները:

«Յուքոմ» ՍՊԸ-ն և «ԶԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն 17.02.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել են, որ «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցող «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» և «ԱրմենՏել» ՓԲԸ-ները, սակայն «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ն նշված ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով հայտը ներկայացնելու դրությամբ ունեցել է ՀՀ հարկային վճարների գծով ժամկետանց պարտքեր:

Պատվիրատուն Կենտրոնին 04.03.2014թ. ներկայացրած N 02/27.27/2934.4 գրությամբ հայտնել է, որ «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 2014թ. հունվարի 14-ին, որին մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) հայտեր են ներկայացրել «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» և «ԱրմենՏել» ՓԲԸ-ները և «Յուլքոմ» ՍՊԸ-ն և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն և ըստ ներկայացված գնային առաջարկների առաջին տեղն զբաղեցրել է «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» և «ԱրմենՏել» ՓԲ ընկերությունների կոնսորցիումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.01.2014թ. կայացած արտահերթ նիստի որոշմամբ դադարեցվել է ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» և «ԱրմենՏել» ՓԲԸ-ների համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցությունը ընթացակարգին, որի համար հիմք է հանդիսացել «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի ՀՀ հարկային վճարների գծով ժամկետանց պարտքեր ունենալու վերաբերյալ ներկայացված տեղեկության իսկության ստուգման արդյունքները:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.02.2014թ. N 034/2438-14 գրությամբ կարևորել է «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի բարեխիղճ վերաբերմունքը և տեղեկատվության ամբողջական բացահայտումն իր իսկ կողմից, վերջինիս գործելակերպը չի բնութագրել որպես տեղեկատվության միտումնավոր աղավաղում (թաքցնում)՝ միաժամանակ հնարավոր համարելով շարունակել գնման ընթացակարգի արդյունքների ամփոփումը:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական պարզաբանումը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը փետրվարի 1-ի արտահերթ նիստում որոշում է ընդունել վերացնել 2014թ. հունվարի 29-ի արտահերթ նիստի որոշումը՝ «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի գնման ընթացակարգին մասնակցությունը դադարեցնելու մասին և շարունակել վերջինիս կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման գործընթացը:

«Յուլքոմ» ՍՊԸ-ն և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն 22.01.2014թ. N 11 գրությամբ դիմել են Պատվիրատուին և հայտնել, որ «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին տեղն զբաղեցրած մասնակցից «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացնելու դրությամբ ունեցել է ՀՀ հարկային վճարների գծով ժամկետանց պարտքեր՝

անաջարկելով նշված տեղեկությունը ճշտելու համար ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցներ:

Պատվիրատուն 23.01.2014թ. N02/27.7/736-14 գրությամբ դիմել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով տրամադրել «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի 2014 թվականի հունվարի 14-ի դրությամբ ունեցած պարտքերի, իսկ պարտքերը մարված լինելու դեպքում մարման ժամկետի վերաբերյալ տեղեկություններ:

Միաժամանակ, Պատվիրատուն 23.01.2014թ. N 02/27.7/737-14 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել, որ «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 2014 թվականի հունվարի 14-ին և հայտերի գնահատման փուլում «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի կողմից ստացված գրությամբ տեղեկացվել է, որ չնայած Ընկերության կողմից հայտով նշված հարկային պարտավորությունների բացակայությանը, իրականում այդ պարտավորությունները մարվել են ոչ թե հունվարի 14-ին, այլ հունվարի 15-ին՝ խնդրելով նախարարության ցուցումը ընթացակարգի հետագա ընթացքի վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն 24.01.2014թ. N ՀՀ -044/1790-14 գրությամբ հայտնել է, որ «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ն 2014 թվականի հունվարի 14-ի դրությամբ ունեցել է ավելացված արժեքի հարկի գծով 1.481.630 ՀՀ դրամ և եկամտային հարկի գծով 1.637.279 ՀՀ դրամ պարտավորություններ, որոնք ամբողջությամբ վճարել է 2014 թվականի հունվարի 15-ին:

Միաժամանակ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ տեղեկատվական բազայի տվյալների համաձայն ընկերությունը 2014 թվականի հունվարի 23-ի դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ ԱԱՀ 5.216.910 ՀՀ դրամ և եկամտային հարկ 4.103.116 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 29.01.2014թ. ժամը 16:30-ին կայացած արտահերթ նիստի արձանագրության 2-րդ կետով որոշում է կայացվել դադարեցնել «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցող «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի և «ԱրմենՏել» ՓԲԸ-ի մասնակցությունը գնման ընթացակարգին:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 01.02.2014թ. N 034/2438-14 գրությամբ հայտնել է, որ եթե «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ն մինչև հարկային

պարտավորություններ չունենալու վերաբերյալ հայտարարություն տալը, իր պարտավորությունները մարելու նպատակով կատարել է գործողություններ (օրինակ բանկային փոխանցում), սակայն պարտավորությունը մարվել է մի քանի օրվա տարբերությամբ, որից հետո Ընկերությունը հայտնել է, որ հիշյալ հայտարարությունը տալու օրվա դրությամբ, ըստ էության, իր հարկային պարտավորությունները մարված չեն եղել և մարվել են հայտերի բացման հաջորդ օրը, ապա կարելի է եզրակացնել, որ կազմակերպությունը ձեռնարկելով միջոցառումներ հարկային պարտավորությունների մարման ուղղությամբ՝ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքեր չունենալու վերաբերյալ հայտարարություն տալու ժամանակ առաջնորդվել է այն կանխավարկածով, որ ձեռնարկված միջոցառումները բավարար են այդ հայտարարությունը տալու համար, մինչդեռ հետագայում պարզվել է, որ վերջինիս հարկային պարտավորությունները մարվել են հաջորդ օրը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, կարևորելով կազմակերպության բարեխիղճ վերաբերմունքը և կազմակերպության կողմից ՀՀ կառավարությանը տեղեկատվության ամբողջական բացահայտումը, գտնում է, որ «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի գործելակերպը չի կարող բնութագրվել որպես տեղեկատվության միտումնավոր աղավաղում (թաքցնում) և հնարավոր է համարել «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքների ամփոփումը և նշված կազմակերպության կողմից ներկայացված հայտի քննարկումը:

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2014թ. N 034/2438-14 գրությամբ տրված պարզաբանումը, 01.02.2014թ. ժամը 17:30-ին կայացած նիստի արձանագրությամբ որոշում է կայացրել վերացնել Հանձնաժողովի 29.01.2014թ. արտահերթ նիստի «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի գնման ընթացակարգին մասնակցությունը դադարեցնելու մասին որոշումը և շարունակել վերջինիս կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման գործընթացը:

Հանձնաժողովի 06.02.2014թ. ժամը 17:00-ին կայացած նիստի արձանագրությամբ որոշում է կայացվել «ՀՀԿԱ-ԲԸԾՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի ընտրված (հաղթող) մասնակից հայտարարել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցող «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» և «ԱրմենՏել» ՓԲԸ-ներին:

Կենտրոնում 04.03.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված լսումների ընթացքում ԳԲԽ-04/14 բողոքը քննող հանձնաժողովի այն հարցին, թե «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ

ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ի կողմից ե՞րբ է մարվել ՀՀ հարկային վճարների գծով ունեցած պարտքերը, Ընկերության ներկայացուցիչը պատասխանեց, որ Ընկերության կողմից պարտքերը մարելու նպատակով 13.01.2014թ. կատարվել է վճարում, սակայն 14.01.2014թ. պարզվել է, որ վճարումը չի հաստատվել, որից հետո 15.01.2014թ. կրկին կատարվել է վճարում՝ միաժամանակ Կենտրոնին ներկայացնելով 15.01.2014թ. NN 000012 և 140115019429062 վճարման հանձնարարագրերի պատճենները:

Ներկայացված NN 000012 և 140115019429062 վճարման հանձնարարագրերի ուսումնասիրությունից պարզվեց, որ «ԱՐՄԵՆԻԱՆ ԴԵՅԹԱՔՈՄ ՔԱՄՓՆԻ» ՓԲԸ-ն 15.01.2014թ. իրականացրել է 1.708.000 ՀՀ դրամ և 2.000.000 ՀՀ դրամ վճարումներ՝ համապատասխանաբար եկամտային հարկի և ավելացված արժեքի հարկի մարման նպատակով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն, գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինն իրականացնում է գնումների գործընթացի մեթոդական ղեկավարումը և դրա շրջանակում պատվիրատուներին մեթոդական օժանդակություն է ցուցաբերում գնումների գործի կազմակերպման հարցում:

Օրենքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), և հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները,

Օրենքի 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են,
- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Յուլբոմ» ՍՊԸ-ի և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի կողմից 17.02.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան



Անդամ՝ Ռոման Չոբանյան

